

1170

# ԵՐԵՐԵԿԱ

ՆՈՒԹԻԿԵ



ՏՊԱԼ

ԿԱՍՏԵԴԱԿԱՎՈՒՄ

ՅԱՐԵՎԱՆԻ ԽԱՆԻ

1854 —

613.8  
Q-57

2010

613.8 ար  
Ա-57

ԵՐԵՎԵԼՈՅՆՈՒԹԻՒՆ

---

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ ՅԱՆԴՂԻԱԿԱՆՔ

ՅՈՎՀԱՆՆԻՍ Գ. ԿՐՁԻՔԵԱՆ

ԱՀԱԿԵՐՏ

Ս. ԽԱՀԱԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱԿԻՆ

ՍԱՄԱԹԻՈՑ

ՀԵՇԻ Ե.

Հ Յ Ո Յ Հ

ՏՊԵԱԼ

Ի ԿՈՍՏՈՒԴՆՈՒՊՈՒՀ

ԵԿՄԻՐԼԻ ԽԱՆՆ

— 1854 —

16248

16248

16248

16248

16248

16248

16248

303

39

16248

16248

16248

ՀՐԱՄԱՆԱԿ  
Տ. Տ. ՅԵԿՈՎՅԵՅ  
ԱՄԵՆԱՊԱՏԻՒ  
ՄՐԲԱՋԱՆ ԱՐԴԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ե Ւ

ՊԵՏՐԻԵՐՔԻ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

436785  
БИРЛАНД - 2 - 2  
4483РДА875  
БИРЛАНД - 2 - 2

436134923  
БИРЛАНД - 2 - 2  
34

# ՅԵՒՅԵՅԵԲԵՇ

## ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Տեսնելով իմ սիրելի Ազգիս օր աւուր  
զրականութեան մասին ունեցած յարատե-  
եւանդն ու աշխայժը . տեմնելով անոր ընթեր-  
ցսոիրութեան մէջ ցուցըցած թէպէտ տկար-  
բաց անընդհատ ախորժակն ու փափաղը . և  
տեսնելով ազգի մը լուսաւորութեան ու յա-  
ռաջադիմութեան գլխաւոր պատճառը դիտու-  
թիւնն ըլլալը , և պիտութեան զարդացման սլ-  
առանց գրաւոր արհեստի անհնարութիւնը ,  
ինչու որ անով աղդերը երջանկութեան ու  
փառաց կը համնիմ . անով իրենց անունը աշ-  
խարհիս վրայ անմահ ու անջինջ կը թողուն .  
որուն ճշմարտութեանը ակներեւ ապացոյց և  
օրինակ ունիմք Խւրոպիոյ բարեկիրթ ու ծաղ-  
կեալ ազգերն , որ հիմակուստն ժամանակիս մէջ՝  
ինչպէս որ ամենուն յայտնի է , իրենց սրան-  
չելի դիտութիւններովն ու ուսմունքներովը

տիեզերահոչակ համբաւ ստացած և աշխարհիս տգիտութեան խաւարին գրեթէ լուսասփիւռ ջահ մը եղած են . մենք ալ՝ ասանկ մեծ, կարեւոր ու ազգօգուտ գործի մը համար ձեռքերնէս եկածին չափ փոքրիկ աշխատանք պ չխնայելու, և Ազգին ըստ կարեաց ծառայելու դիտաւորութեամբ ուզեցինք անանկ մէկ գիրք մը ընտրել, որ մանաւանդ հայազգի ընթերցողաց բարոյականին վրայ գոնէ քիչ մը ազգեցութիւն կարենայ ընել. և զդուշացընել զի՞րենք միանդամայն թէ հոգւոյ և թէ մարմնոյ վնասակար կերպիւ ներգործող այնպիսի սոսակալի ու ամօթալից մոլութենէ մը, որ մարդուս մարմնոյն վրայ անբուժելի ու անդարմանէլի ախտեր բերելէն զատ՝ հոգւոյն ազնիւ կարողութիւններն ալ բնաջինջ կ'ընէ, ու ինչուսն անոր աւազելի կորստեանը պատճառ կ'ըլլայ. և այս է Անբարեխառնութիւնը, որուն ընութեանը, պատճառներուն, նշաններուն, չարիքներուն և դարմանին վրայ խօսող վեց ճառաերէ բաղկացեալ ընտիր գրբոյկ մը ձեռքերնիս անցնելով, զորն որ հանճարաւոր ու գիտական Անդղիացիի մը յօրինածն է ու մեր նըսպատակին և բաղձանքին խիստ պատշաճ ըլլաւլով, անոր ամեն մէկ ճառերը հետզհետէ զատ զատ թարգմանաբար պիտի ընծայենք Ազգին, թէ որ այս առաջինը իրենց քաղցր ակնտրելութեան և ընդունելութեան հանգիստելու չանկալի բարեխաղդութիւնը ունենայ:

## ԱՆԲԱՐԵԽԱՌՆՈՒԹԻՒՆ

Ո՞ւմ է վայ . ո՞ւմ խռովութիւնք .  
ո՞ւմ են դատաստանք . ո՞ւմ գմնդակու-  
թիւնք և վարանք . ո՞ւմ են ջախջախանք  
տարապարառուց . ո՞յր են կազուտակ ակա-  
նողիք : Ո՞ւ ապաքէն այնոցիկ՝ որ յամենն  
՚ի գինուջ , և դիտենուր դիներբուք լինիցին :

Մի արբենայք գինեաւ . այլ խօ-  
սեցարուք ընդ մարդս արդարս , և խօսե-  
ցարուք ընդ միմեանս ՚ի հրապարակս : Ա-  
պա թէ ՚ի տաշոս և ՚ի բաժակս արձա-  
կիցես զաւս քո , յետոյ շրջիցիս մերկագոյն  
ևս քան զանդատոռն : Եւ ՚ի վախճանի  
իրեն զածահար տարածիցիս , և իրեւ ի-  
ժի թոյնք սփառեցին : Աք քո իրեն տե-  
սանիցէ զիին օտար , բերան քո յայնժամ  
խօսիցի զթիւրս : Եւ անկեալ դնիցիս ՚ի  
սիրտ ծովու և իրեն զնաւավար ՚ի մէջ բա-  
զում մրրկի : Եւ ասիցես թէ հարկանէ-  
ին զիս՝ և ինձ ո՞չ ցաւէր . այսն առնե-  
ին զիս՝ և ոչ գիտէի . և ըրբ լիցի առաւօտ՝  
զի ելեալ խնդրեցից ընդ որում շրջիցիմ :

ԱՌԱԿԻ ՍՈՂՈՄՈՆՏ ԴԳ . 29-35 :

Ա ՍԻԿԱՅ անբարեխառնութեան  
մեղքին այն նկարագիրն է , որուն  
հասուցած բազմադէմ չարիքներուն

այլ և այլ հանդամանքները՝ միայն  
 գրիչը կրցաւ բովանդակելու այս փոք-  
 րիկ պարունակութեանս մէջ, որն որ  
 իրեն գերի եղողներուն կ'ընծայէ իր  
 վայերն ու խռովութիւնները, դա-  
 տաստաններն ու դժնդակութիւննե-  
 րը, և տարապարտ ջախջախանքն ու  
 կապուտակ աչքերը. առաջիր առ ե-  
 րեսս քաղցր ժաղիտը, ու վերջը իժի  
 պէս իր մահաբեր թոյնը. անդունդի  
 մէջ թողուածներու պէս իր զոհերուն  
 անյուսութիր. և մրրկի ատեն նաւուն  
 կայմին վրայ քնացող նաւավարին նը-  
 ման ըրած սոսկալի կորուստն ու  
 դառն արտասուքը: « Եւ ասիցես  
 թէ հարկանէին զիս՝ և ինձ ոչ ցա-  
 ւէր, այսպէս առնէին զիս՝ և ոչ դիտէի.  
 Ե՞րբ լիցի առաւօտ՝ զի ելեալ խնդըն-  
 ցից ընդ որում շնչիցիմ ու: Արկին

ծեծուէ ու այպանուէ . կրկին կորսու  
եան անդունդը դիմէ' . և կրկին մը-  
րըրկի ատեն կայմին վրայ քնացի' թ :

Յիրաւի , անքարեխառնութե-  
նէն զատ մեղք մը չկայ՝ որքիչ պաշտ-  
պանութիւն ունենայ : Աշխարհիս  
թշուառութեանց մէկ հատիկ պատճա-  
ռըն է . պէտք էր որ աշխարհս ալիրեն  
անհաշտ թշնամին և զինքը միշտ ատե-  
ցող ըլլար . բայց ընդ հակառակը,  
աւաղ որ , այսպիսի մեծ ու անպա-  
տըսպար մեղքի մը վրայօք մարդկային  
ընկերութիւնը խորին տղիտութեան  
մէջ կը գտնուի , ու անոր սկըսելուն  
և յառաջանալուն թոյլտութիւն կ'ը-  
նէ :

Ամեն մարդ գինովութենէ կը  
խորշի ու կը վախէ . և դեռ անոր ար-  
քանեակներուն հազարաւորներէն մէ-

կը՝ անոր բացած ասպարիզին մէջ քա-  
 ջաքայլ յառաջացած ատենը անգամ  
 չգուշակեր իրեն ապագայ ողբալի վը-  
 նասները : Օ ինուորը՝ մահահոտ խը-  
 րամին մօտենալու ատենը , տեսնե-  
 նելով որ իւր առջեի զինակիցները  
 կարդ կարդ մահուն գիրկը ընկեր են ,  
 երբեմն կը վչատի , կը տարակուսի ,  
 ու վաղահաս մահուանէ ինքզինքը  
 կ'ազատէ : Բայց մարդիկ ուրիշներու  
 վրայ հաստատուն անբարեխառնու-  
 թեան հզօր ազդեցութիւնները տես-  
 նելով և բուն իրենց աչքերովն ալ  
 դիտելով՝ իրենք ալ արհամարհոտ  
 անհոգութեամբ միենցին վտանգաւոր  
 ձամբուն մէջ ոտք կը կոխեն , յա-  
 ռաջ կ'երթան ու ինչուան մահ՝ սի-  
 րով զանիկայ կ'ընդդրկեն :

Այս անհոգութեան մէկ մասը՝

վեասուն նախնի վիճակին ունեցած  
 թեթևութենէն և միանգամայն մար-  
 դոց տղիտութենէն կը պատահի, ա-  
 նոր մերձեցման փորձական նշանները  
 բանի տեղ չդնելով : Ատութիւնը և  
 գողութիւնը որոշեալ գործքեր են,  
 բայց անբարեխառնութիւնը ներքին  
 զգացման վիճակն է . նշանները շա-  
 րունակ իրեն գերիներուն վրայ կ'ե-  
 րեան ու կը շատնան , որոնք չեն ըզ-  
 դուշանար որ անբարեխառնութեան  
 մէջ կը գտնուին : Շատ անգամ կը  
 պատահի՝ որ մարդիկ բարքերնին չեն  
 օւղղեր , առանց կասկածելու որ ետ-  
 քը անկէց մեծ վեաս կ'ընդունին .  
 ուստի այս անթիւ ուղեորներով  
 խոնած ընդարձակ ճամբուն նկա-  
 րագրութենէն աւելի ամենահարկա-  
 ւոր բան մը չկընար ըլւալ . որ բա-

ըեխառն մարդիկները երբոր անոք  
մօտենան՝ տեսնեն իրենց վտանգը ու  
ետ քաշուին :

Ենթարեխառնութիւնը ժամա-  
նակիս մէկ տնիծեալ պատուհասն է,  
որ մեր ամբաւ յաջողութեամբը հե-  
ղեղի պէս վրանիս կը տեղայ . և թէ  
որ աշխարհիս յոյսերը ջնջող բան  
մը կայ նէ՝ այն ալ այս կրակէ դետն է,  
որ երկրիս մէջ կը թաւալի կենսական  
օդը ապականելուի , ու ամեն տեղ  
մահու մթնոլորդ ծաւալելով :

Այ խնդրեմ արդոյ ընթերցողնե-  
րէն՝ որ յետագայ ճառիս մէջ լաւ ու  
շաղրութիւն ընեն անբարեխառնու-  
թեան պատճառներուն և ընութեանը  
վրայ :

# Ճ Ա Ր Ե

---

Ա Ն Բ Ա Ր Ե Խ Ա Ռ Ո Ւ Թ Ե Ա Ն

Պ Ա Տ Ճ Ա Ռ Ո Ւ Ե Ր Ն

Ե Ւ

Բ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը

**Չ**ԱՍԱՐԱԿԱՌՈՒԹԵԱՆ մէջ կար-  
ծիք մը կայ՝ թէ ու իցէ բան որ մար-  
դուս մտաւոր կարողութեանը և մարմ-  
նոյն գործարաններուն կանոնաւոր  
շարժմանցը չվնասեր՝ անբարեխառ-  
նութիւն չէ. նաև անոնք՝ որ ոգելից

ըմպելիքներ՝<sup>1</sup> կը խմեն, թէ որ իրենց  
 մտքին, խօսքին և մարմնական ան-  
 դամներուն կրնան հրամայել, ան-  
 բարեխառն չեն համարուիր : Եւ տա-  
 կաւին, այս սահմաններուն Աջ և  
 ղած խմողները իրենց խառն փա-  
 փաքներուն, փուճ տեղ մնխած ըս-  
 տակներնուն, առողջութեան և բնու-  
 թեան վրայ յառաջ բերած արուես-  
 տական զօրութիւններնուն, բարո-  
 յական զգացողութիւններնուն, և որ  
 մեծն է՝ մարմնոյ և մտաւորական տը-  
 կարութեան կամ անխոչեմ արբե-  
 ցութեան վերջին ու սոսկալի հետե-  
 ւանքներուն նայելով կրնան անբա-

1 Այն զանազան տեսակ գրգռիչ հեղուկ-  
 ներուն կ'ըսուի, որ մարդիկ սովորութիւն ը-  
 րած կը գործածեն, ինչպէս, գինի, օղի, ցքի,  
 գարեջուր և այլն :

բեխառն սեպուիլ:

Աստուած ստեղծեց մարդը՝ միայն  
կերակրով ու քունով ապրելու հա-  
մար, և միտքը՝ բարոյական գիտու-  
թեան կանոնաւոր առողջութեամբն  
ու ջանքովը, և իր բարոյական կա-  
ռավարութեան զուարթ ազդեցու-  
թեամբը զօրանալու համար: Եւ  
ով որ ինքզինքը սնուցանելու, կամ  
միտքը զօրացնելու կամ սիրտը ու-  
րախացընելու համար սովորաբար  
գրգռիչ ու զօրաւոր ըմպելիքներու  
կը դիմէ, անիկայ իրեն բնութեան  
օրէնքներուն վրայ բռնութիւն կը  
գործէ, բոլոր մարմական դրուիլ  
կը խանգարէ, ու կ'ըլլայ անբարե-  
խառն մէկը դեռ իւր միտքը չտկա-  
րացած կամ մկանունքը չթուլցած:

Ոգեղեն ըմպելիքները ինչպէս.որ

ուղեղին և մարմնոյ անդամներուն վը-  
 րայ հզօր ազդեցութիւն ունին, ա-  
 նաևկ ալ մարդուս բարոյականին  
 կործանմանը առիթ ըլլալով՝ հոգւոյն  
 կը ներգործեն, որոնց «Հսկայ — չա-  
 րիք ո անունը տալ կը վայլէ»: Այն  
 անբարեխառն մարդիկները՝ որ չարա-  
 չար արբեցութեամբ ինչուան անդգա-  
 յուն աստիճան կը հասնին, գինո-  
 վութենէն սթափած ժամանակնին  
 թէ որ իրենց մտաւորական կարո-  
 ղութիւնն ու սիրտը վնասած չըլլայ,  
 այն ատեն անբարեխառնութիւնը  
 իր սոսկալի չարիքներէն յանցանքը  
 կը մերկացընէ: Հայց սուրբ Գրքին  
 մեղաց դէմ հրատարակած վայերէն  
 մէկն ալ այս է. «Վայ սյն զօրաւոք  
 մարդոց՝ որ գինի կը խմեն, վայ մ-  
 նոնց որ զօրաւոք ըմպելիքներ կ'ը-

պառեն „ : Այսպիսիները անբարեւ  
խառնութեան կապանքին գլխաւոր  
գերիներն են . որ ինչուան իրենց  
նախնի գերեկից եղբարցը քով գե-  
րեղմանը մտնելու լլան՝ խմելէ չեն  
դադրիր : Տէրը ազատէ մեզի անանկ  
անխոհեմ մարդիկներէն , որոնք որ  
լեզու կը շարժեն երբ որ իրենց քով  
ամենքը լուռ կը կենան . աչքերնին  
կը բանան երբ իրենց բոլորտիքը ե-  
ղողները կը քնանան . և զեղխութեան  
զգացմամբ կը շարժին՝ երբոր իրենց  
ընկերները խեղճու օգնութեան կա-  
րօտ են :

Յայտնի Ճշմարտութիւն մըն է ,  
որ սովորական արբեցութիւնը ժա-  
մանակաւոր արբեցութենէն շատ վը-  
նասակար է : Խեղճ Հնդկաստանցին  
ամիսը անդամ մը այնչափ կը խմէ

որ իրը մեռեալ միայն պարզ շնչառութեամբ անդգայ կը մնայ . բայց քիչ ու յաճախ խմողէն տարիներով աւելի կ'ապրի , և գուցէ անբարեխառն չհամարուիր : Ենձնական զուարծութիւն կամ առոյգութիւն ստանալու համար օրական ոգելից ըմպելիքներ գործածելը անբարեխառնութիւն է :

Հաւանականաբար չկայ անանկ մէկը որ օրը անդամ մը ոգեսոր ըմպելիքներ խմելով՝ անոնց վնասակար ազդեցութեանցը դէմ իրեն մարմնոյն կազմութիւնը զօրացընէ . կամ իւր խոհեմութեամբը և նոյն իսկ անձնական կառավարութեամբը կարող ըլլայ անոնց քանակը չաւելցընելու , տրուն անշուշտ հետեանքներն են մարմնոյ տկարութիւն և մոքի թըմ-

ըութիւն : Յժէև բնութիւնը՝ օրական  
արբեցութիւնը քանի որ շարունակ-  
ուի , մարմնոյն կազմուածքին կոր-  
ծանմանը համար անոր փորած ակա-  
նին դէմ երկար ատեն կրնայ դիմա-  
նալ . բայց կանուխ կամ ուշ կենաց  
այս ոսոխը իրեն գերի ըրածները  
մեծամեծ վնասներու ենթակայ կ'ընէ ,  
և թէ անզօրն ու թէ զօրաւորը այն-  
չափ կը տկարացընէ որ ոտքի վրայ  
կանգնելու անդամ ոյժերնին չըա-  
ւելով՝ հաւասարակշութիւննին կը<sup>1</sup>  
կորսնցընեն ու գետինը կ'իյնան :

Ոգեղէն ըմպելիքներուն բոլոր  
առժամանակեայ զուարձութիւննե-  
րը՝ ինչպէս թեթևութիւն , այլան-  
դակ կատակ և բարձր ծիծաղ ա-  
ռաջ կը բերեն , անբարեխառնու-  
թիւն են , թէ որ մեզի խոհական

ըլլալ պահանջող այն պատուերները  
կամ՝ Ռիստոսի արդար դատաստանին  
այսպիսի զուարձութեան և թեթե-  
ւութեան վրայ ունեցած ազդեցութիւ-  
նը լաւ դիտենք : Քիչ ժամանակի  
մէջ մտքին և զգացողութեան տըկա-  
բութիւնը անանկ անզգալի կերպով  
և միօրինակ ու առողջ ընթացքով  
մը մարմնոյն կը տիրէ , որ խեղճ դի-  
նեմոլը չզգար իրեն վնասը , ու չար-  
թըննար անոր դարման տանելու :

Ո՞հտքը՝ մտաւոր կարողութեան  
իր սահմաններն ունի . և սիրտը՝ ըզ-  
գացողութեան իր սահմաններն ու  
առողջարար զուարձութեան ջղային  
դրութիւնը . և ո և է վնասակար  
նախապաշարմամբ դրգոիչ հեղուկներ  
գործածողները քանի որ կենաց վախ-  
ճանին մօտենան , այնչափ մտքերնին

կը ըռնուի և կենսական դօրութիւն-  
 նին կ'անհետանայ : Ասիկայ օրական  
 արբեցութեան գաղտնի անբարե-  
 խառնութիւնն է , որ սաստիկ անձ-  
 նական տկարութիւններ և տեսակ  
 տեսակ անբուժելի ախտեր կը պատ-  
 ճառէ . ինչպէս՝ ախորժակի կո-  
 րուստ — սրտի խառնուք — խառն  
 մաղձ — լերդի ( գարա ճիշէր ) ար-  
 գելթներ — գլխու պտոյտ — ջրգողու-  
 թիւն ( սլսգալըգ ) — ձայնի կեր-  
 կերումն ( սէս գըսըլմասը ) — հազ  
 — թոքախտուի — հարբխային ախտեր  
 — լուսնոտութիւն ( թութարբգլըգ ,  
 սարայ ) — յօդացաւութիւն ( սինիր  
 իլլէթի , վէճա ) — փորու ցաւ  
 — անդամալուծութիւն — կաթ-  
 ուած — խելագարութիւն — ահա  
 ասոնք կ'ըսուին պահապանք — մարմ-

( 24 )(

նոյ, որ անբարեխառնութենէն կը  
ծագին չարաշար արբեցութեամբ ,  
ու անոր պտուղները չեն համարուիր :

Կան անանկ շատերը , որոնք ար-  
բեցող չսեպուելով ախտերու տէր  
կ'ըլլան , ու իրենց օրերը կը կարծե-  
ցընեն այս խօսքովս թէ « Ոգեղեն  
ըմպելիքներուն խոհեմարար գործա-  
ծութիւնը մարդս չվնասեր » : Ճանդ  
անջինջ փորագրուի բոլոր մարդոց  
սրտին վրայ , թէ օրական ոգեւոր ըմպե-  
լիքներուն ժործածութիւնը ինչ իւրական ու-  
ինչ չափով ո՞ր ըւլայ՝ անբարեխառնութիւն է :

Ենոնց ազգեցութիւնները ան-  
շուշտ են ու խիստ վնասող . թէն  
հետևանքները ուշ երեան ելելուն  
համար բուն պատճառը իրենց չեն  
տար :

Վարդուս կազմութեանը վրայ

յաղթական պատերազմ մըն են, որ  
 շարունակ յաղթութիւն կը գործեն,  
 և իրենց ընծայածէն աւելի կենսա-  
 կան զօրութիւնը նուազեցընելէն եր-  
 բէք չեն դադրիր : Այսմաց կամաց  
 վազող ջրի կը նմանին, որ քիչ քիչ  
 իրենց ընթացքը կ'ընդլայնեն ու կ'ըն-  
 դարձակեն, ինչուան որ կեանքը  
 ինքնիրեն իւր վախճանը կ'ընդունի :  
 Ոմէ որ ամօթալից դինեմոլութենէն  
 պատճառած ու միայն մահուամբ վեր-  
 ջացած այն բոլոր անբուժելի ախտերը  
 գերեզմանին մէջէն խօսելու կարող  
 ըլլային, կամ դադաղին մէջէն իրենց  
 պատճառը զրուցէին, այն ատեն կը  
 տեսնէինք այն խիստ սոսկալի ու ան-  
 յուսալի գաղտնիքները : Երջանիկ է  
 այն մարդը՝ որ վնասներէ ամենայն  
 կերպով կը զգուշանայ, ու իր օրեւ-

ըլ ոգեղէն ըմպելիքներու խոհեմ  
դործածութեամբը չկարձեցըներ :

Ի՞սյց հիմա գանք այն փորձա-  
ռութեան վիճակին, որուն մէջ քիչ  
վտանգաւոր անբարեխառնութիւն  
ըլլալ կը կարծուի : Ըսել կ'ուզեմ  
թէ, երբոր մտաց կարողութեան կայ-  
սերութիւնը կը յաղթահարի և տը-  
կարութիւնն ու յիմարութիւնը կը  
թագաւորէ, այն ատեն մարդս են-  
թակայ կ'ըլլայ շաղակրատութեան  
կամ տխուր լրութեան յօժարելու,  
կամ բարկութիւն ու անխոհեմ խօս-  
քեր շնչելու և երդում ու անէծք  
թափելու, կամ իրենց և ուրիշնե-  
րուն գաղտնեաց շտեմարանը բանա-  
լու : Եւ տակաւին շատերը կը կար-  
ծեն, որ ասոնք բաւական հաստատուի  
մը չեն գինովութեան վրայ եղած ծա-

Նըր մեղադրանքները պաշտպանելու,  
 և լրկեղեցւոյ առաջը յանդիմանու-  
 թեան դատ մը արդարացընելու : Են-  
 զուներ պապաջելու և ոտքեր սայ-  
 թաքելու են, որ Վրիստոնէական  
 սուրբ կրօնին պաշտօնեայները (քա-  
 րողիչները) և այլն իրաւունք ունենան  
 անբարեխառնութենէն ծագած վը-  
 նասները յայտնապէս հաստատելու  
 և գինեմոլները յանդիմանելու :

Ե վերայ այսր ամենայնի, անբա-  
 րեխառնութեան յանցանքին վրայ  
 ճիշտ ու ընդարձակ տեղեկութիւն մը  
 ստանալու համար, ոչ միայն կարծ  
 նկարագրութիւն մը պէտք է, այլ  
 նաև կենդանական դրութեան վրայ  
 ունեցած իր մեքենական ազդեցու-  
 թիւններուն մէկ փիլիսոփիայական  
 վերլուծութիւնը :

Օդացողութեանց , տաղանդից ,  
 գիտութեան , բնաւորութեան շահու  
 և ընտանեկան սիրելութեանց վրայ  
 ըրած անբարեխառնութեան յաղ-  
 թութիւնները զարմանալի երևցած  
 են անոնց՝ որոնք որ միայն արտաքին  
 երեսյթքի վրայ կը նային : Ի՞այց զար-  
 մանքը կը դադրի , երբոր մտածենք  
 անգամ մը թէ անիկայ սաստիկ ցան-  
 կութեան տենջը կը բորբոքէ , և  
 մարմնոյն ամեն մէկ երակին և հոգ-  
 ւոյն կարողութեանը վրայ վշտաց  
 ձեռք կը դնէ :

Ստամօքսը՝ արեան երագ շրջա-  
 նին , շնչաւոր ոգւոց առաձգական  
 զօրութիւնը , ջղերուն հաճոյական  
 կամ ցաւագին ձգմանը , մտաց ոյժին  
 և հոգւոյն զուարթագին յօժարու-  
 թեանց դիւրացուցիչ մեծ գործա-

բանն է :

Ահաւասիկ կենաց արծթէ լարը ,  
ու աղբիւրին մէջի ոսկեղէն բաժա-  
կը , և աւազանին մէջի անիւը . ա-  
սոնք իրենց պարտը կատարելու ա-  
տեննին մկանանց , մտաւոր ու բա-  
րոյական զօրութիւններն ալ մէկտեղ  
կը գործեն , և բոլոր մարմինը զօ-  
րութեամբ ու զուարժութեամբ կը  
լեցընեն :

Ի՞սյց երբոր այս կեդրոնական  
կարողութիւնները տկարանան , մը-  
տաւոր ու մարմնական զօրութիւն-  
ներն ալ կը թմրին , և խոնջութիւնը ,  
ճնշումը , տրտմութիւնը , թշուա-  
ռութիւնը և ուլքն ու սուգը առող-  
ջութեան մէծ հարուածներ կ'ըլլան ,  
ու կենաց պայծառ լոյսը կը խաւա-  
ըեն :

Փորձով հաստատուած է թէ և  
և իցէ գրդոիչ հեղուկ ստամոքսին  
տրուելու ըլլայ՝ անոր մկանանց ա-  
ռաձդականութիւնը գրեթէ բոլորո-  
վին կ'ամբառնայ, ու ժամանակ անց-  
նելէն ետեւ տկարութիւն կը պատճա-  
ռէ, որ այն գործաւոր գործարանին  
գերբնակտն գրգումանէն յառաջ կու-  
գայ:

Ստամոքսին կենսատու զօրու-  
թիւնը առողջութեան և զուարթու-  
թեան աստիճանէն այնչափ կը խո-  
նարհի, որչափ որ յառաջադոյն ան-  
խոհեմաբար վեր կը հանուի: Թէ  
որ արբեցութիւնը յաճախակի կը ըկ-  
նուելու ըլլայ՝ ստամոքսին մէջ արուես-  
տական զօրութիւն մը կը պատճա-  
ռէ զուարթութեան և մկանանց ոյ-  
ժին հարկաւոր, բոլորովին բնութեան

աանելու կանոնաւոր զօրութենէն վեր .  
 և դատարկ միջոց մ'ալ կը գոյացընէ ,  
 զորն որ վեասէ զատ ուրիշ բան  
 չկրնար լեցընել և երբոր այս յարա-  
 տե սովորութիր բնական ու այս ար-  
 ուեստական կարողութեանը մէջ այն  
 մէծ տարբերութիւնը կ'ընէ , անշուշտ  
 այն մարդը արբեցող է , ու հարիւ-  
 րին գրեթէ իննսուն և ինը անդար-  
 մանելի կերպով կը վեասուին : Իմէ  
 լեզուն պապաջէ և թէ ոտքերը սայ-  
 թաքին չսայթաքին անտարակոյս այն-  
 պիսիները իրենց մահը անբարեխառ-  
 նութենէն պիտի ընդունին : Անոնց  
 ախտին ինչ անուն տրուելու ըլլայ՝  
 լեզէոնի խումբէն մէկը պիտի ըլլայ ,  
 որ անբարեխառնութեան ճամբուն  
 մէջ որոգայթ լարած կ'ըսպասէ : Հի-  
 րաւի , դժոխքին բոլոր ճամբաներէն

որոնց մէջ մեղանչող մահկանացուաց  
ոտքերը կը կոխեն, ամենէն սոսկալին  
և սարսափիելին անբարեխառն մար-  
դուն ճամբան է :

Ըռողջարար կերակուրին պակա-  
սութիւնը լեցընելու համար արուես-  
տական գրգոիչ հեղուկներ խմելը՝  
սաստիկ ծարաւութեան ու սովի ան-  
յագութեան կը նմանի : Առվմըն է,  
վասն զի այս արուեստական գրգու-  
մը հիմա այնչափ հարկաւոր եղած է  
ինչպէս որ պարզ կերակուրը : Աւ-  
քնութիւնը իրեն ընաւ կարօտ չե-  
ղած բանը հիմա գործածութեամբ  
փափաքելով մահուան պէս անողո-  
քելի դատակնիքէ մը առողջութիւն  
ու հաճութիւն կը խնդրէ : Ենկից  
հրաժարիլն ալ կենդանի մոհ մըն է:  
Ատամոքսը, գլուխը, սիրտը, շնչե-

բակները, երակները, մկանունքը և  
 բոլոր ջղերը տկարութիւն կ'ըզգան.  
 ու ասկէց յառաջ Նկաժ անպատմելի  
 տառապանքն ու թշուառութիւնը կե-  
 նաց լցուը կը խաւարեն, Երկինքը  
 կ'ըսքօղեն ու երկիրը կը մթնցընեն :  
 Հետոյ, այս վեասած բնութիւնը՝  
 թշուառ մարդէն կը խնդրէ որ մթու-  
 թիւնը փարատէ, կենաց տեղատուու-  
 թիւնը աճեցընէ միւնոյն բանով որ  
 նոյն թշուառութիւնները պատճա-  
 ռած է . և որն որ վայրկենական հան-  
 գստութենէ ետև առաջուընէ աւելի  
 կը գէշնայ ու աւելի ստիպողական  
 թախանձանքներ կ'ընէ . վասն զի ա-  
 մեն մէկ անդամ որ արբեցութիւնը  
 կը կրկնուի՝ մթութիւնը կը կրկնա-  
 պատկի, անձնուրացութեան տան-  
 ջանքներն ու տառապանքները խիստ

անտանելի ու անդարմանելի կ'ըլլան :

**Վ**երջապէս բնութեան կարողութիւնը կը տկարանայ, ու աւելի մեծ քանակութեամբ ու զօրութեամբ գրգռիչներ կ'ուզէ կենաց թմրած զօրութիւնը զարթուցանելու համար, մինչև վերջապէս յապաղիչ մարդասպանութեան ընթացքը (քաւարանի) նեղութենէն աւելի գէշնալով՝ կենաց արծթէ կապը կը թուլնայ, ոսկեղէն բաժակը կը կոտրի, ու հողը հող կ'ըլլայ՝ ինչպէս որ եր, ու հոգին ալ բատուծոյ կ'երթայ՝ որ ինքը տըւաւ :

**Կ**ենդանական բնութեան այս նեղութիւննելը՝ բարոյական մահուան տագնապներուն հետ ու իցէ կերպով չեն կրնար բաղդատուիլ, որոնք որ մարդուս հոգին կը ցնցեն : Անմահ

արարած մընէ որ կը մեղանչէ ու կը  
 տանջուի. և քանի որ իր երկրային  
 տունը կը քակուի՝ կը մօտենայ այն  
 վերջին դատաստանական ահեղ ա-  
 տենին՝ խղճալի յաւիտենականու-  
 թեան մը ձեպելով։ Ա'ըզգայ իր գե-  
 րութիւնը ու հոգւոյ անձկութեամբ  
 կը դղրդէ իր շղթայները, և օգնուի  
 կը կանչէ, մտքին խիղճը կ'որոտայ,  
 խղճին խայթը կը կըճէ. ու երբոք  
 առջին այն ահարկու տարտարոսը  
 բացուի՝ կ'սկըսի քստմնիլ, դողալ,  
 ողբալ, աղօթել, մտքին մէջ տեսակ  
 տեսակ բաներ որոշել և ինքզինքը  
 բարեկարգելու խոստանալ։ Տնչուառ  
 մարդ, անանկ անդութ հսկայի մը  
 ձեռքը տուեր է ինքզինքը՝ որ երբէք  
 ողորմիլ չունի, և իր երկաթեայ ձեռ-  
 քէն ամենեին չի թողուր, Ա'աշխատի

աղատելու , բայց 'ի զուր . անքակա-  
տելի ու անքեկանելի շղթաներու մէջ  
է . աղատութիւն կը պօռայ , բայց  
որո՞ւ . իւր բնակարանին դրան վրայ  
փորագրուած է իորս' ուստի , իորս' ուստի :

Ես միջոցին իւր մեռած բարո-  
յական բնութեան ցնցիւնները կը տը-  
կարանան , ու սոսկալի անզգ այութիւն  
մը՝ որ է հոգեոր մահուան սուրհան-  
դակը վրայ կը հասնի : Այտաւոր կա-  
բողութիւնն ու առոյգ ձեռնարկու-  
թիւնը կը բռնուի , և ջլային գրգը-  
ռումն ու վհատութիւնն ալ կը յա-  
ջորդէ : Յնկերական սէրերը կը կոր-  
ունցընեն իրենց լիութիւնն ու փափ-  
կութիւնը , և միտքը իր զօրութիւնը  
ու սիրտն ալ իր ազնիւ զգացողու-  
թիւնը , մինչեւ որ իրեն հին ու մոե-  
րիմ ծանօթներն ու բարեկամները

կը հրաժարին իրմէն, և կը թողուն  
 զինքը այն դիշատիչ գաղանին ժան-  
 եացը մէջ։ Այս ողորմելի վիճակին  
 մէջ իւր յարդը կը կորսուի, դործը  
 կը վարանի, և մեծամեծ փորձու-  
 թիւններու մէջ իյնալու հակամի-  
 տութիւնը կ'աճի, ու դիմադրութեան  
 զօրութիւնն ալ կը պակսի. և յետոյ  
 այն ազատութեան ջանացող զոհը  
 գիննեմոլութեան ծովուն մէջ ինկած՝  
 անոր հրային ալիքները խիստ տկար  
 հարուածներով կը բաղնէ. ինչուան  
 յուսահատութիւնը իւր հոգւոյն վը-  
 րայ կը զօրանայ, ու Երկինքը դղը-  
 դեցընող ահեղ ձայնով մը ջանքե-  
 րէն իը թուլնայ և անոր մէջ կ'ընկղմի  
 ու աներեսյթ կ'ըլլայ :

Եսանկ սոսկալի մեղքի մը միայն  
 ծնունդը յայտնուելուն պէս՝ օրօրանին

մէջ խեղդել պէտք է . բայց սովորաբար , ասոր հակառակ , այս սովորութիւնը այնչափ կ'աճի , որ ալ անկէ բաժնուելու յօյս չի մնար , իրեն յօժար դերիները դեռ վնասու փոքրիկ կասկած մը չունեցած :

Ուրեմն մեծ ու կարեոր բան է անբարեխառնութեան բոլոր այլ և այլ պարագայներն ու պատճառները լաւ կերպով նկարագրելու . ու անոնք որ իրենց վիճակը դարմանելի է , տեսնեն իրենց ապագայ վնասը ու դարման տանին . և անոնք որ անբարեխառնութենէ ազատ են , այս փորձութեան և կործանման տեղերէն զգուշանան : Հատկապէս երիտասարդաց օդտին համար կ'առաջարկեմ աշխարհացոյց տախտակ մը առջենին դնելու , ու այն ամեն մէկ կործա-

նած ու թակարթուած մարդոց տեղերը  
 զգուշութեան արձաններ կանգնեցը-  
 նելու, որով իմացընեմ իրենց թէ  
 որչափ բազմաթիւ ուղևորներ այս վը-  
 տանգաւոր ճամբուն մէջ կը գտնը-  
 վին : Անբարեխառնութեան առաջին  
 պատճառը՝ զոր պիտի յիշատակեմ,  
 ընտանեաց մէջ ոգեոր ըմպելիքնե-  
 րուն աղատ ու յաճախ գործածու-  
 թիւնը կը համարուի . իրու թէ ա-  
 խորժակ բերող, աշխատութեան հան-  
 գիստ և զուարթութեան դրդիու տը-  
 ւող ըլլան : Այս փոխադարձաբար  
 կրկնուած շնորհքին տղայոց ալ թող-  
 ուած է մասնակից ըլլալու, և իրենց  
 ստամոքսին փափուկ գործարանները  
 առաջուց խանգարելու, և անբարե-  
 խառնութեան սովորութիւններուն ա-  
 ռաջուց պատրաստելու զիրենք :

Է՞նտարակոյս ենք թէ, օրական  
ոգելից ըմպելիքներու սովորած ըն-  
տանիք մը՝ այն սոսկալի ախտին սեր-  
մերը իրեն մէջ սերմանելով՝ կանուխ  
կամ ուշ աւաղաբեր ու դառն պը-  
տուղներ քաղած չըլլայ: Այսչափ  
ծանը փորձութեան և թշուառու-  
թեանց առիթ եղող նիւթի մը ըն-  
տանեաց մէջ պէտք չէ որ տեղի տըր-  
ուի: բաց՚ի դեղի տեղ գործածուե-  
լէն, թէ որ այն աւ դեղավաճառին  
ապահով ձեռքէն ելլէ:

Ա՞նշան հիւրասիրութեան տըր-  
ուած ոգելից ըմպելիքները՝ շատ հեղ  
անքարեխառնութեան պատճառ կ'ըլ-  
լան: Այս առթով փորձութիւնը ըն-  
տանեաց որոշեալ բնակակից մըն է:  
Եւ երբոր հիւր չըլլայ՝ հեղուկին ե-  
րեսյթքը առողջութեան վիճակը, կամ

խոնջութիւնն անդամ ( խոհեմարար )  
 գործածութեան սեպհականութիւնը  
 կը ցուցընէ , ինչուան խոհեմարար  
 գործածութիւնը երթալով սովորա-  
 կան կ'ըլլայ . և սովորականն ալ  
 անդարմաննելի անբարեխառնութիւն :  
 Անտարակոյս այս կերպով շատ  
 հայր , մայր , տղայ ու աղջիկ մշտըն-  
 ջենաւոր թշուառութեան մէջ ինկած  
 են :

Կաև , այս ընտանեկան հիւրըն-  
 կալութեան մասնակից եղող հիւրե-  
 րուն թիւը քիչ չէ՝ որոնք միշտ թա-  
 կարթի մէջ կ'իյնան . մանաւանդ ա-  
 նոնց՝ որոնց արհեստը կ'ստիպէ զի-  
 րենք ստէպ ստէպ կամ մէկ օրուան  
 մէջ շատ անդամ ընտանիքներու այ-  
 ցելութիւն ընելու : Ուստի , հիւրա-  
 սիրութեան գործ մը և բարեկամու-

թեան նշան մը սեպուելու տեղ՝ մեր  
բարեկամները խմելու հրաւիրելը ան-  
շուշտ անքաղաքավարութեան գործ  
համարելու է, այսպիսի ծանրակշիռ  
փորձութեան պարագաներու մէջ թէ  
մեզի և թէ զանոնք դնելնուս համար :

Հասարակաց գումարման օրերուն  
մէջ արբեցութեան չափը անցնելուն  
առիմները կը շատնան, որոնք դրժ-  
բաղդաբար մարդս անբարեխառնու-  
թեան մէջ կը ձգեն: Խորմը երը շարու-  
նակ քաջաքայլ յառաջ կը դիմեն ինք-  
զինքնին որոշեալ փորձուն լնծայելու,  
քանի որ ուրիշներուն օրինակն ու  
զուարժութեան զգացողութիւնը ի-  
րենց նպատակին ազատ կատարում  
կ'ապահովցընէ : Այց երբոր մէ-  
կը ( խոհեմարար ), ինչպէս որ կ'ը-  
սնի, արբեցութեան վարժուելու ըլ-

լայ , հասարակաց ժողովման օրերը՝  
որ մէկ տարուան մէջ քանի մը ան-  
դամ կը պատահին , անցնելէն ետև  
խմբու փափագը վրան իսկոյն կ'ար-  
մատանայ . ինչուան բնութեան առող-  
ջարար ախորժակը ոգեսոր ըմպելիք-  
ներէն պատճառած արուեստական  
սաստիկ ծարաւէն կը յաղթուի :

Հերկբառիթ բաժակէ բորբոքած  
և ուրախացած դիշերային խօսակցու-  
թեան ժողովները հաջարաւոր մար-  
դիկներու կործանմանը պատճառ ե-  
ղած են ու կ'ըլլան :

Ասոնք միայն ( 'ի սրտէ բղխեալ  
ուրախութի մը և հրճուանք մը ) կ'ե-  
րևան . բայց վերջը օձի պէս անբու-  
ժելի կերպով կը խայթեն , և իժի  
պէս կը կճեն . շատ ողորմելի մար-  
դիկ իրենց շղթաները շարժած և

Հոգւոյ անձկութեամբ աղաղակ վերուցած են . ո՛չ , ընկերական արբեցութեան անիծեալ ժողովը . հո՞ն իմ ձեռքերս կապուեցան ու ոտքերս շղթայի զարնուեցան . հո՞ն՝ ես ազատ մարդ մըն էի ու եղայ գերի , բարեխառն մարդ մըն էի ու եղայ գինեմոլ :

Խմելու համար գումարուած բոլոր խրախճանական ժողովները նոյն ծանրակշիռ փորձութեան ներքել կ'իսնան : Ասանկ առիթներու մէջ երիտասարդները ոչ խմելէ կը վախեն , և ոչ խմելու հրաւիրուած ատենախն երկչոտութեամբ դէմ կը կենան : Յիրաւի , այս փորձութեանս մէջ՝ բարեյաջող վիճակի հասնելու շատ մը երիտասարդներ անդարմանելի կերպով կործանած են : Այսպիսի

սկզբան ու մէկ մահաբեր վախճանի  
մը մէջ տեղի կապակցութիւր անանկ  
յայտնի է , ու Երկնից համարձակու-  
թիւնը անանկ մէծ , որ Աստուած  
իւր արդարացի տհաճութեամբը սովո-  
րած է իւր պաշտպանութիւնը բառ-  
նալու ու մեղաւորը իր չար ճամբուն  
մէջ թողելու :

Վ նասած կենսական գօրութիւ-  
նը , մկանաց տկարութիւնը և մտա-  
ւոր կարողութեան թմբութիւնը  
գրգոիչ հեղուկներով քիչ մը ժա-  
մանակ կը թեթեւնան . բայց այս  
վայրկենական թեթեւնութեան պատ-  
ճառ եղող նիւթը այնչափ կը դոր-  
ծածուի որ , մինչև չարաչար արքե-  
ցութեան սովորութիւնը կը կեր-  
պաւորի , ու կ'ըլլայ անդարմանելի :

Ի ժկական դեղերը՝ անտարա-

կոյս, անբարեխառն մարդկանց թիւը  
աւելցընելու կ'օգնեն : Պառն կամ  
ուրիշ ու է դեղերու տեղ տրուած  
զօրաւոր ըմպելիքները միշտ վնասա-  
կար են. և քանի որ խեղճ հիւան-  
դը բժշկեն առողջութիւն կը խնդ-  
րէ, ան կուտայ տկարութիւն ու  
մահ :

Ոգեղեն ըմպելիքներու թոր-  
ման տեղերը՝ անընդհատ գինովնե-  
րու խումբեր յարուցանելեն երբէք չեն  
դադրիր : Անոնց գնոյն աժանութիւ-  
նը և ընտանեաց գնելու դիւրութիւ-  
նը յաճախ գործածութեան պատճառ  
կ'ըլլայ, և որով անբարեխառնու-  
թիւնը ընդորձակ կը ծաւալի :

Անգործ կամ հաստատուն գործ  
չունեցող անձինքը գինետուններու-  
մէջ բոլոր օրը խմելով պարապ տե-

զը կ'անցունեն, և ուր որ օրական  
 աշխատութիւննին լմնցընող վաստա-  
 կաբեկ գործաւորներն ու արուես-  
 տաւորները ուշ ժամանակ կը ժող-  
 վը վին պարապոյ ժամ մը անցընելու  
 համար, չի տեսնուիր մէկը որ չի խմէ  
 ու միայն դիտող ըլլայ, և չիտեսնուիր  
 մէկն ալ որ ժամանակին փոքրկու-  
 թեանը համեմատ բարեխառն կեր-  
 պով խմէ: Ասանկ տեղերու բոլորտի-  
 քը գտնուած երիտասարդները անոնց  
 ուրախութենէն յափշտակուած՝ ի-  
 րենք ալ ընկերական արբեցութեան  
 և քաջութեան ցոյցը և իրենց կան-  
 խահաս մարդկութիւնը յայտնելու  
 համար ժողով կը կազմեն: Ասանկ  
 առիթներով այն ահարկու հրէշին  
 երկաթեայ ձեռքը անոնց վրայ ամուր  
 կը հաստատուի, անանկ մէկ ատեն

մը որ դեռ ծնողական խնամոց և  
թեւարկութեան կը հարկաւորին :  
Ուրեմն ոգեղէն ըմպելիքներուն ծախ-  
ուիլը սոսկալի չարիք մըն է եղեր :

Տեսակ տեսակ կերպերով և բա-  
ղադրութիւններով շինուած ըմպե-  
լիքներ ծախուելու անընդհատ սովո-  
րութիւնը՝ մարդս յաճախ ճաշակ-  
ման կը հրաւիրէ, և ճաշակումը խը-  
մելու, ու խմելը չարաչար արբեցու-  
թեան, և չարաչար արբեցութիւնն  
աւ ամօթալից դինովութեան . որով  
մարդ բոլորովին ինքզինքը կը կոր-  
որնցունէ, տեսնողներուն առջե խաղք  
ու ծանակ կ'ըլլայ, մարդկութեան  
ամենաքաղցր պարտաւորութիւնները  
կը մոռնայ, ու անբան անասնոց կը  
հաւասարի :

Բարեկամներու կամ սիրելեաց

մահը, գործոց անյաջողութիւնը և. ըն-  
չից ու ստացուածոց վեասիլը՝ մարդս  
տրտմութեան սաստիկ ճնշման տակ կը  
ձգեն. փոխանակ իրեն հոգերը տի-  
րոջը յանձնելու՝ ուրախառիթ արբման  
կը դիմէ, որով իրեն դառն վշտաց  
դարմանը կ'ըլլայ թշուառութիւն և  
անքուժելի ախտեր։ Առաջուան ժա-  
մանակաւոր վշտերը ետքը աւել-  
նալով՝ կ'ըլլան մշտնջենաւոր։

Մտքին թմրութիւնը արթնցընե-  
լու կամ վեասած կենդանական բնու-  
թիւնը զօրացընելու համար չափե-  
ղուրս գործածուած ոգելից ըմպելիք-  
ները՝ մահառիթ փորձ մը կ'ըլլան։  
Այս կերպով շատ զօրաւոր մարդիկ  
այնպիսի տկարութեան մէջ կիյնան՝  
որ երբէք առողջութեան երես չեն  
տեսներ։ Խճէկ անոնք պատահական

զօրութիւն մը կ'ընծայեն մարմնոյն ,  
բայց հոգւոյն կարողութիւնը կ'սպա-  
ռեն . ու անանկ մէկ վհատութիւն մը  
և անձի տկարութիւն մը կուտան որ ,  
խեղճ դինեմոլը շարունակ կը գոչէ  
և տուր , տուր „ . և ինչուան վերջին  
շունչը փշած ատենն անգամ “ ալ  
բաւական է ” չըսեր :

Աշխատութեան իրրե օդնական  
գործածուած ոգեոր ըմպելիքները՝  
շատ անգամ այլ և այլ հիւանդու-  
թիւններ կը պատճառեն . ինչու որ  
խիստ սովորական և խիստ քիչ կաս-  
կածելիներն են որ անբարեխառնու-  
թեան պատճառ կ'ըլլան :

Անվեաս սեպուած ու օդտակար  
համարուածները՝ ճշմարիտ կ'ըսեմ ,  
և փորձով ալ կատարելապէս հաս-  
տատուած է , որ բոլորովին անօդուտ

և 'ի վախճանի վնասակար ըլւալէն  
զատ՝ անբարեխառնութեան սոսկալի  
չարիքներուն մարդս կ'առաջնորդեն:  
Ուժեղէն ըմպելիք յը մէջ անունու չի այ:   
Ի՞նըր անոր գործը՝ բնութեան զօրութեանը  
ժամանակ մը հաստիւ է գերբնական իարու-  
ղութեան ճշգրտնց համար: Ճամանակա-  
ւոր զօրութիւն մը փոխ առնել է, որ  
ապագային երբեք օգուտ չունի:

Եմն ատեն տեսած ենք ու կը  
տեսնենք այնպիսի մարդիկներ՝ որոնք  
առանց ողեոր ըմպելիքներ գործա-  
ծելու խիստ առողջ ու առոյգ, աշ-  
խատաւոր ու զօրաւոր, և վերջապես  
բնութեան բոլոր ընծայած ամեն բա-  
րի յատկութիւններովը կը փայլին  
գործածողներէն շատ աւելի:

(Օրինակի համար, թու հաւասար  
տարիք ու հաւասար մարմնոյ կազ-

մութեան հաստատութիւն ունեցող  
երկու մարդ՝ մէկը ողելից ըմպելիք-  
ներ խմելով և միւսը առանց խմելու  
մէկտեղ ամառը աշխատին . անտա-  
րակոյս վերջինին զօրութիւնը ան-  
վաս կը մնայ, քանի որ առջինը բաղ-  
դատարար շատ վնաս կը կրէ :

Ո՞րչափ արդեօք անխոհեմ հայ-  
րեր իրենց մոլի ու ամօթալից սովո-  
րութիւնը տեղը տանելու համար օ-  
րական կամ գուցէ շաբաթական  
վաստըկածնին գինետունները կը ձր-  
գեն, առանց լսելու իրենց խեղճ զա-  
ւակներնուն անօնի Են+ ըսելը :

Ո՞րչափ արդեօք անխելք երի-  
տասարդներ ինքզինքնին կամակար  
գինեմոլութեան հրային ովկիանոսը  
կը ձգեն, առանց հոգեսոր և մարմնա-  
ւոր անհրաժեշտ պարտաւորութիւն-

Նին կատարելու, ու անոր մէջ երելով  
ու մրկելով յաւիտեան կը կորսուին :  
Արդարեւ սոսկալի՝ ախտ : Ոգեոր  
ըմպելիքներ չփորձածող գործաւոր-  
ներն ու արուեստաւորները զօրաւոր,  
բարեկամասէր, ճարտար ու առողջ  
մարդիկ կ'ըլլան, և իրենց ընտանիքը  
սակաւապետ, աղէկ հոգացուած, ա-  
ղէկ հագուած ու կրթուած, և փո-  
խանակ թշուառութեան ու աղքա-  
տութեան, ճախորդութեան ու գըժ-  
տութեան ընկերական սիրոյն յորդ-  
հոսմամբը խաղաղ կեանք կը վարեն :

Աշխատութեան իբրև օրական  
օգնական գործածուած ըմպելիքները  
սովորաբար որոշեալ ժամերու մէջ կը  
խմուի . սովորութիւնը շուտով ստա-  
մոքսին մէջ դատարկ միջոց մը կը գոյ-  
ացընէ , որ օրու ան ժամերը կը ցու-

ցընէ անանկ մէկ ճշդութեամբ մը՝  
ինչպէս ժամացոցը :

Ասկէց զատ ուրիշ ատեն ալ ըստ  
տէպ ստէպ կը խմուի , որն որ ընութեան  
առողջարար կարողութեան  
վեասը կը փութացընէ . ինչուան ախորժակը կ'ըլլայ անյագ , և անբարեխառունութեան սովորութիւնը հաստատուն .  
ինչուան ջղային տկար զօրութիւնը ընկերական ազնիւ ու փափուկ զգացողութիւնները կը մոռնայ և ընտանիքը շաղակրատութեան ու թշուառութեան տեսարան մը կը դարձընէ . ինչուան որկորաժէտ ախորժակը իւր որդւոցը հացը կը լափէ , ու զանոնք տղիտութեան և մեղաց աղջամիջուտ խաւարին մէջ մշտնջենաւոր կը թողու . ինչուան խիղճը կը խստանայ և հաւատարմութիւնն ու ճարտարու-

( 55 )(

թիւնը կանհետանայ և վերջապէս  
տուփական անառակութիւն , կոիւ ,  
հակառակութիւն և անտանելի խըռ-  
ձութիւն կը տիրէ նոյն տանը \*



( ५२ )

त्रिविद्या त्रिविद्या त्रिविद्या त्रिविद्या  
त्रिविद्या त्रिविद्या त्रिविद्या त्रिविद्या  
त्रिविद्या त्रिविद्या त्रिविद्या त्रिविद्या  
त्रिविद्या त्रिविद्या त्रिविद्या त्रिविद्या



2013

«Ազգային գրադարան



NL0072795

